ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Վ. Ադամյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 28/06/2023 N 106-Լ որոշմամբ

ՃԱՄԲԱՐԱԿ 2023թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 14
2.4. Պատվիրակված ծառայություններ 17
2.5. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 17
2.6. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 20
2.7. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 25
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 38
3.1. Համայնքի զարգացման տեսլական 38
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 39
4. ՀՀՀԶԾ ֆինանսավորում 53
5. ՀՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր 54

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Սիրելի բնակիչներ,

Վերջին 5 տարիներին՝ 2018-2022 թթ. Ճամբարակ համայանքում իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք միտված են եղել ենթակառուցվածքների բարելավմանը, երեխաների համար կրթության և զարգացման նոր հնարավորությունների ստեղծմանը, համայնքի զարգացմանը:
Մեր նպատակն է առաջիկա 5 տարիների ընթացքում նպաստել, որպեսզի Ճամբարակ համյանքն ունենա բարելավված ենթակառուցվածքներ, նոր աշխատատեղեր, նախադպրոցական և արտադասարանական կրթության և ժամանացի նոր հնարավորություններ երեխաների և երիտասարդների համար, զարգացած հասարակական տրանսպորտի համակարգ և նոր հնարավորությունների միջավայր նախաձեռնող և ձեռներեց մարդկանց համար, որտեղ համայնքը կկարողանա հոգ տանել նաև տարեցների և կարիքի մեջ գտնվող բնակիչների համար:
Ճամբարակ համայնքի զարգացման համար գերակա ոլորտներն են՝ գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը:
Ճամբարակ համայնքում հիմնական խնդիր է հանդիսանում սահմանային անկայուն իրավիճակը, երիտասարդների և որկավորված մասնագետների արտագաղթը համայնքից, համայնքի ծերացումը, աշխատատեղերի սակավությունը, արժանապատիվ վարձատրությունը, բնակիչների նախաձեռնողականության պակասը, սահմանին մոտ գտնվելը նույնպես մեծ խոչընդոտ է լայնածավալ ներդրումների համար, որից էլ բխում են սոցիալ-տնտեսական մյուս հիմնախնդիրները:
Հնգամյան զարգացման ծրագիրը կազմելու նպատակով իրականացվել են հանդիպումներ բնակիչների և շահագրգիռ կողմերի հետ, որտեղ քննարկվել են համայնքի զարգացման հնարավորությունները և զարգացմանը խոչընդոտող հանգամանքները: Հնգամյա զարգացման ծրագիրը կազմվել է հաշվի առնելով բնակիչների առաջարկները, համայնքի առկա հիմնախնդիրների առաջնահերթությունը, ֆինանսատնտեսական և մարդկային ռեսուրսները:
Ճամբարակ համայնքը Հայաստանի Հանրապետությունում առանձնանում է իր բացառիկ դիրքով՝ իր մեջ ներառելով Սևանա լճի ափամերձ տարածքները, Սևան ազգային պարկի մի մասը, բարձրադիր լեռներ և անտառներ.անհրաժեշտ է համատեղ ջանքերով օգտագործել այս բոլոր ռեսուրսները ի նպաստ մեր համայնքի զարգացման և բարեկեցիկ ապրելակերպի:

Ճամբարակ համայնքի ղեկավար՝ Վազգեն Ադամյան

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ճամբարակ խոշորացված համայնքը Գեղարքունիքի մարզի 5 համայնքներից մեկն է: Ճամբարակ խոշորացված համայնքը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում 09.06.2017թ. ՀՕ-93-Ն կատարված փոփոխության արդյունքում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքային, Վահան, Թթուջուր, Գետիկ, Մարտունի, Այգուտ, Դպրաբակ, Ձորավանք, Կալավան, Անտառամեջ, Ճապկուտ գյուղական համայնքների և Արծվաշեն բնակավայրի միավորումից: 2022թ.-ին Ճամբարակ համայնքին միացավ Շողակաթ համայնքը, որի արդյունքում այժմ Ճամբարակ համայնքի կազմում են գտնվում Դրախտիկ, Աղբերք, Շողակաթ, Արտանիշ, Ջիլ, Ծափաթաղ գյուղական բնակավայրերը: Այսպիսով Ճամբարակ համայնքի մաս են կազմում մեկ քաղաք և 18 գյուղական բնակավայր: Համայնքի կենտրոնը Ճամբարակ քաղաքն է: Համայնքի գյուղերից է Արծվաշենը, որը Ղարաբաղյան առաջին պատերազմից հետո գտնվում է Ադրբեջանի վերահսկողության ներքո: Ճապկուտը բնակեցված չէ:

Ճամբարակ համայնքի ընդահնուր բնակչությունը 14951 է, որից կին՝ 7595, տղամարդ՝ 7356; տնային տնտեսությունների թիվը՝ 4657:

Համայնքի բնակչության թիվն ու սեռատարիքային կազմը (2023թ-ի հունվարի 1-ի դրությամբ):

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվը	Արական	Իգական	Տարիքային խումբ				
					0-4տ	4-7տ	7-18տ	18-63տ	63-ից բարձր
1	Ք. Ճամբարակ	6682	3283	3399	272	258	955	4068	1129
2	Վահան	1131	560	571	88	40	140	708	155
3	Թթուջուր	1013	526	487	52	35	149	641	136
4	Գետիկ	433	231	202	25	11	65	249	83
5	Մարտունի	567	297	270	27	18	72	377	73
6	Այգուտ	801	403	398	36	35	106	488	136
7	Դպրաբակ	530	204	326	43	23	69	281	114
8	Ձորավանք	160	71	89	4	19	27	94	16
9	Կալավան	177	96	81	9	11	24	85	48
10	Անտառամեջ	181	84	97	3	10	39	87	42
11	Ճապկուտ	-	-	-	-	-	-	-	-
12	Դրախտիկ	996	483	513	70	62	159	546	159
13	Աղբերք	300	148	152	39	19	51	154	37
14	Շողակաթ	510	236	274	31	22	79	291	87
15	Արտանիշ	583	271	312	36	35	139	275	98
16	Ջիլ	683	360	323	44	41	87	429	82
17	Ծափաթաղ	204	103	101	14	11	38	106	35

18	Արծվաշեն	-	-	-	-	-	-	-	-
Ընդհանուր		**14951**	**7356**	**7595**	**793**	**650**	**2199**	**8879**	**2430**

Բնակչության սոցիալական կազմը

Սոցիալական կազմը	Թիվը
Տնտեսությունների թիվը	4657
Թոշակառուներ	3651
ԱՀ-ից տեղահանված ընատնիքներ	42
Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	3
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	102
Արցախյան պատերազմի մասնակիցներ	1299
Հաշմանդամներ	654
Զբաղվածներ	3631
Գործազուրկներ	2567
Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքներ	711

Ճամբարակ համայնքի վարչական տարածքը կազմում է 73759,9 հա, որից վարելահող՝ 15603,5 հա, խոտհարք՝ 11098,2 հա, արոտավայր՝ 33966,4 հա, բնակելի՝ 1478,1 հա, այլ հողեր 12015,0 հա:

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 724316.1 ՀՀ դրամ 2023թ.-ի դրությամբ:

Ճամբարակ համայնքում արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած: Համայնքում բիզնես միություններ / առևտրի պալատներ, մասնավոր հատվածի իրավաբանական անձանց միություններ և այլն/ չկան, համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող 18 փոքր ձեռնարկություններով, 10 արևային կայանով, 4 հիդրոէլէկտրոկայանով, Սևանի ափին գտնվող 20-ից ավելի հանգտսի գոտիներով, թվարկված վերջին երեքի սեփականատերերը համայնքի բնակիչներ չեն: Այսպիսով համայնքում բիզնեսի վիճակը բարվոք համարել չի կարելի: ՓԲԸ-ների, ՍՊԸ-ների և ձեռնարկատերերի կողմից կազմակերպվում են հացի և թարմ այլուրի հրուշակեղենի, կաթնամթերքի, կահույքի, և այլ արտադրություններ: Արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է: Արդյունաբերության մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը: Տարեցտարի ավելանում էր գյուղական տուրիզմով զբաղվող ձեռներեցների թիվը: Այս ոլորտը բավականին տուժեց 2020 թ.-ից ի վեր, պայմանավորված կոռոնավիրուսի համավարակով և Արցախյան երկրորդ պատերազմով:

Համայնքի բնակչությունն ըստ զբաղվածության բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվողներ, պետական և տեղական ինքնակառավարման կառուցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, սեզոնային շինարարություններում աշխատողներ, սպասարկման ոլորտում աշխատողներ:

Արդյունաբերական ձեռնարկություններ

Բնակավայր	Ձեռնարկություն	Արտադրանք
Ճամբարակ	2 հացի փուռ	Հացաբուլկեղեն
	3 Կաթի վերամշակման կետ	Պանիր, կարագ
	3 հրուշակեղենի արտադրություն	Խմորեղեն
Վահան	1 սպանդանոց	Միս
Թթուջուր	-	-
Գետիկ	-	-
Մարտունի	2 ՓՀԷԿ	Էկեկտրաէներգիա
Այգուտ	2 ՓՀԷԿ	Էլեկտրաէներգիա
Դպրաբակ	-	-
Ձորավանք	-	-
Կալավան	1 գինու արտադրամաս	Գինի
	1 օրգանական մեղրի արտադրամաս	Մեղր
Անտառամեջ	-	-
Ծափաթաղ	2 արևային կայան	Էլեկտրաէներգիա
Ջիլ	-	-
Արտանիշ	1 ցեմենտի գործարան	Ցեմենտ
	2 արևային կայան	Էլեկտրաէներգիա
Շողակաթ	1 խմորեղենի արտադրամաս	Խմորեղեն
	5 արևային կայան	Էլեկտրաէներգիա
Դրախտիկ	1 հացաբուլկեղենի արտադրություն	Թխվածքներ
Աղբերք	3 արևային կայան	Էլեկտրաէներգիա
Ընդամենը	**30**	

Ծառայության ոլորտի ձեռնարկություններ

Բնակավայր	Ձեռնարկություն
Ճամբարակ	46 Խանութ
	2 Կրպակ
	2 Հյուրատուն
	3 սննդի կետ
	8 Վարսավիրանոց/գեղեցկության սրահ

	1 Վարկային կազմակերպություն
	3 ռեստորան
	3 ծաղկի սրահ
	1 կոշիկի նորոգում
	2 ԱԳԼՃԿ
	1 փոստային ծառայություն
	3 դերձակ
	3 ավտոտեխսպասարկում
	3 անվադողերի սպասարկում
	1 կաթի ընդունման կետ
	2 էլեկտրոտեխնիկայի վերանորոգում
	4 ատամնաբուժական ծառայություն
	1 բանկ
Վահան	5 խանութ
	1 կաթի ընդունման կետ
Թթուջուր	5 խանութ
Գետիկ	1 հյուրատուն
Մարտունի	1 խանութ
	1 արագ սննդի կետ
	4 հյուրատուն
Այգուտ	2 խանութ
	1 հյուրատուն
Դպրաբակ	4 խանութ
	2 հյուրատուն
Ձորավանք	1 խանութ
Կալավան	9 հյուրատուն
	1 գաստրոբակ
	1 անտառային խոհանոց
Անտառամեջ	2 հյուրատուն
Ծափաթաղ	2 խանութ
	1 հյուրանոց
	2 հյուրատուն
	1 ռեստորան
	1 թեյարան
Ջիլ	4 կրպակ
Արտանիշ	3 խանութ
	3 հյուրանոց
Շողակաթ	4 խանութ
	1 կրպակ
	19 ծովափնյա հանգստի գոտի
	1 սննդի կետ
	1 կաթի ընդունման կետ

Դրախտիկ	5 Խանութ
	2 Հյուրատուն
Աղբերք	1 խանութ
Ընդամենը	**181**

Հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները

Բնակավայր	Ձեռնարկություն	Արտադրանք
Ճամբարակ	Մսամթերք (խոշոր եղջերավոր)	167400 կգ
	Մսամթերք (մանր եղջերավոր)	27475 կգ
	Կաթ	1862400 լ
	Ձու	972180 հատ
	Հացահատիկ	1400000 կգ
	Կարտոֆիլ	1900000 կգ
Վահան	Ցորեն	294 000 կգ
	Գարի	20000 կգ
	Կարտոֆիլ	65000 կգ
	Կաթ	13800 լ
	Միս	200000 կգ
Թթուջուր	Ցորեն	30000 կգ
	Գարի	1300 կգ
	Հաճար	9300 կգ
	Ոլոռ	1000 կգ
	Կարտոֆիլ	85000 կգ
	Խոտ	450000 կգ
	Կաթ	400000 լ
Գետիկ	Ցորեն	18000 կգ
	Կարտոֆիլ	140000 կգ
	Կաթ	335000 լ
Մարտունի	Աշնան ցորեն	27000 կգ
	Գարի	4000 կգ
	գարնան ցորեն	3000 կգ
	Հաճար	4000 կգ
	Կաթ	460000 լ
	Կարտոֆիլ	21000 կգ
Այգուտ	Ցորեն	93 000 կգ

	Կարտոֆիլ	15 000 կգ
	Բանջարաբոստանային կուլտուրաներ	2000 կգ
	Կաթ	420000 լ
Դպրաբակ	Կարտոֆիլ	1600 կգ
	Բանջարեղեն, հատապտուղ	1270 կգ
	Կաթ	222000 լ
Ձորավանք	Կարտոֆիլ	39000 կգ
	Լոբի	3000 կգ
	Կաթ	24000 լ
Կալավան	Օրգանական մեղր	104 կգ
	Կաթ	125000 լ
Անտառամեջ	Կարտոֆիլ	32000 կգ
	Կաթ	90000 լ
	Սոխ	400 կգ
	Սխտոր	400 կգ
	Լոբի	1000 կգ
Ծափաթաղ	Ծիրան	5000 կգ
	Կարտոֆիլ	11000կգ
	Կաթ	7000 լ
Ջիլ	Ցորեն	62000 կգ
	Գարի	48000 կգ
	Կարտոֆիլ	122400 կգ
	Լոբի	2400 կգ
	Կաթ	320000 լ
Արտանիշ	Ցորեն	28000 կգ
	Գարի	14000 կգ
	Կարտոֆիլ	100000 կգ
	Կաթ	244800 լ
Շողակաթ	Ցորեն	24000 կգ
	Կաթ	12000 լ
Դրախտիկ	Ցորեն	65000 կգ
	Գարի	28000 կգ
	Կարտոֆիլ	200000 կգ
	Կաթ	720000 լ
Աղբերք	Կաթ	480 000լ
	Միս	40500 կգ

Զբոսաշրջային հետաքրքություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ

Բնակավայր	Անվանում
Ճամբարակ	Եկեղեցի Սբ. Գրիգոր, 1029 թ. ք. մ., Վերին Ճամբարակի հս եզրին. Ամրոց «Գալուստաքար», մ.թ.ա. 2-1 հզ, Խաչքարեր, 10-13 դդ., Հուշաղբյուր Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին, 1950-ական

	թթ. Վերին Ճամբարակ; Հուշաղբյուր Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին, 1960 թ. Սբ. Խաչ եկեղեցու մոտ, Հուշարձան երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին, 1970-ական թթ., դպրոցի դիմաց, Սբ.Խաչ եկեղեցի, 2007թ.
Վահան	Ամրոց, մ.թ.ա. 1 հզ սկզբ - մ.թ.ա. 3 դ.; Դամբարանադաշտ, մ.թ.ա. 2-1 հզ., Խաչքարեր, 10-17 դդ; Հուշաղբյուր Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներրն, 1958 թ.; Հուշարձան Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին, 1987 թ.
Թթուջուր	Թթուջուր հանքային աղբյուր; Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի, 2016 թ.
Գետիկ	Ամրոց, մ.թ.ա. 2-1 հ զ, Գետիկի աջ ափին, «Աղջաղալա» Ամրոց տանող ճանապարհին; Ամրոց «Մուղնա խաչ», մ.թ.ա. 1 հզ, 7-10 դդ., Սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, 2016 թ. Դամբարանադաշտ, մ.թ.ա. 1 հզ.; Խաչքարեր, 11-16 դդ.; Հուշաղբյուր Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին, 1961թ.; Հուշարձան Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին, 1974թ.
Մարտունի	Ամրոց, մ.թ.ա. 2-1 հզ, Մարտունի-Այգուտ ճանապարհից աջ, անասնագոմերի մոտ; Եկեղեցական համալիր «Կարմիր եղցի» (Հին Գետիկ), 9-12 դդ., կիսավեր, Ամրոց «Աղջաղալա», 10-13դդ.; Ամրոց «Բերդի դոշ», մ.թ.ա. 2-1 հզ, Եկեղեցի, 12-13 դդ., ավերակ; Չաթինդարի ջրվեժ; Սբ. Ստեփանոս եկեղեցի, 1992 թ.Խաչքարեր, 11-17 դդ.; Դամբարանադաշտ, մ.թ.ա. 2-1 հզ., Հուշարձան Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին, 1970 թ., Հուշաքար Եղեռնի զոհերի 100 ամյա հիշատակին, 2015 թ.
Այգուտ	Գերեզմանոց, 17-18 դդ.; Խաչքարեր, 10-15 դդ;
Դպրաբակ	Եկեղեցի, 12-13 դդ.; Խաչքար, 17-18 դդ; Մատուռ, 12-13 դդ; Կամուրջ, 19 դ.;
Ձորավանք	Եկեղեցի, 12-13 դդ.; Խաչքարեր, 10-16 դդ.; Գերեզմանոց, 10-18 դդ.
Կալավան	Բարեպատում՝ Գերեզմանոց, 12-17 դդ.; Դամբարանադաշտեր, 2-1 հզ.; Խաչքարեր, 12-13 դդ.: Կալավանում՝ Ամրոցներ, մ.թ.ա. 2-1 հզ.; Դամբարանադաշտեր, մ.թ.ա. 2-1 հզ; Բացօթյա կայան, քարի դար; Գերեզմանոցներ, 16-17 դդ.; Խաչքարեր, 14-17 դդ.; Մատուռ, 17-18 դդ, Բարեպատ Գետի աջ ափին
Անտառամեջ	Կուսական անտառներ, բարձրադիր սարեր: Մատուռ 13 դար.
Շողակաթ	Սուրբ Աստվածածին եկեղեցի 17-րդ դար ,գերեզմանոց խաչքարերով 10-18 դդ դար, Դամբարանադաշտ Ք.ա. 2-1 հզմ, Մատուռ 10-14 դդ դար, Սևանա լճի ափամերձ տարածք
Դրախտիկ	Խաչքարեր 1554թ. 16-17 –դդ դար , Սևանա լճի ափամերձ տարածք, Ամրոց մ.թ.ա. 2-1 հզմ
Աղբերք	Գերեզմանոց, 17-18 դդ
Արտանիշ	Խաչքարեր 16-17-դդ դար, Ամրոց <<Դաշտ-Լեռ>> մ.թ.ա. 1 հազ., Ամրոց <<Արտանիշ>> մ.թ.ա. 2-1 հազ., Եկեղեցի 17-դդ դար, Սևանա լճի ափամերձ տարածք
Ջիլ	Եկեղեցի, 16-17 դդ.; Խաչքարեր 15-16-դդ դդ., Սևանա լճի ափամերձ տարածք
Ծափաթաղ	Սևանա լճի ափամերձ տարածք, Խաչքարեր, Կիկլոպյան ամրոց; «Ավան Մարաք Ծափաթաղ»-հյուրանոց

Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ

Բնակավայր	Անվանում	Քանի հոգու համար է նախատեսված	Քանի հոգի է ընդգրկված
Ճամբարակ	Ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոց	450	478
	Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց	460	233
	Ճամբարակի ավագ դպրոց	192	101
	Ճամբարակի թիվ 4 միջնակարգ դպրոց	320	58
	Ճամբարակ համայնքի Է. Ղուլյանի անվան գեղարվեստի դպրոց	90	83
	Ճամբարակ համայնքի երաժշտական դպրոց	120	98
	Ճամբարակ համայնքի մանկապատանեկան մարզադպրոց	150	60
	Ճամբարակ համայնքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ	120	112
	Ճամբարակ համայնքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ	90	76
Վահան	Ճամբարակ համայնքի Վահանի մսուր-մանկապարտեզ	40	36
	Վահանի միջնակարգ դպրոց	250	132
Թթուջուր	Թթուջրի միջնակարգ դպրոց	320	136

	Ճամբարակ համայնքի Թթուջրի մսուր-մանկապարտեզ	80	70
Գետիկ	Գետիկի միջնակարգ դպրոց	200	60
	Գետիկի նախակրթարան	20	3
Մարտունի	Մարտունու միջնակարգ դպրոց	172	60
	Մարտունու նախակրթարան	18	6
	«Բնության Կենտրոն» գիտակրթական և բարեկեցության կենտրոն	20	10
Այգուտ	Այգուտի միջնակարգ դպրոց	200	85
	Այգուտի նախակրթարան	20	9
Դպրաբակ	Դպրաբակի միջնակարգ դպրոց	150	84
	Դպրաբակի նախակրթարան	25	8
Ձորավանք	Ձորավանքի միջնակարգ դպրոց	50	9
Կալավան	Կալավանի միջնակարգ դպրոց	180	18
Անտառամեջ	Անտառամեջի միջնակարգ դպրոց	60	18
Ծափաթաղ	Ծափաթաղի մոբայլ մանկապարտեզ	20	6
	Ծափաթաղի միջնակարգ դպրոց	50	26
Ջիլ	Ջիլի միջնակարգ դպրոց	786	91
	Ճամբարակ համայնքի Ջիլի մսուր-մանկապարտեզ	50	24
Արտանիշ	Արտանիշի միջնակարգ դպրոց	232	98

	Արտանիշի միջնակարգ դպրոցի նախակրթարան	10	10
Շողակաթ	Շողակաթի միջնակարգ դպրոց	150	79
	Շողակաթի մոբայլ մանկապարտեզ	10	6
Դրախտիկ	Դրախտիկի միջնակարգ դպրոց	900	204
	Դրախտիկի մոբայլ մանկապարտեզ	16	14
Աղբերք	Աղբերքի միջնակարգ դպրոց	700/վթարային/	40
	Աղբերքի նախակրթարան	25	16

Առողջապահական հաստատություններ

Բնակավայր	Տեսակ	Քանի հոգու համար է նախատեսված	Տարեկան այցելուների թիվը
Ք. Ճամբարակ	Առողջության կենտրոն	6740	51204
Վահան	ԲՄԿ	958	430
Թթուջուր	ԲՄԿ	1018	680
Գետիկ	ԲՄԿ	437	250
Մարտունի	ԲՄԿ	568	269
Այգուտ	ԲՄԿ	860	427
Դպրաբակ	Բուժամբուլատորիա	568	301
Ձորավանք	ԲՄԿ	154	88
Կալավան	ԲՄԿ	174	63
Անտառամեջ	ԲՄԿ	148	69
Դրախտիկ	ԲՄԿ	1113	710
Աղբերք	ԲՄԿ	367	358
Շողակաթ	ԲՄԿ	624	450
Արտանիշ	ԲՄԿ	614	399
Ջիլ	ԲՄԿ	697	480
Ծափաթաղ	ԲՄԿ	204	500

Ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված ընտանիքներ

Բնակավայր	Ընտանիքներ
Ք. Ճամբարակ	437
Վահան	40
Թթուջուր	48
Գետիկ	3
Մարտունի	12
Այգուտ	51
Դպրաբակ	22
Ձորավանք	5
Կալավան	5
Անտառամեջ	3
Դրախտիկ	47
Աղբերք	9
Շողակաթ	17
Արտանիշ	52
Ջիլ	44
Ծափաթաղ	25

Գործազրկության մակարդակը

Ճամբարակ համայնքում կա գրանցված 595 գործազուրկ:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

h/h	Ծրագրի անվանումը	Պայմանագրի Գումարը	Պետական Մաս	Համայնքային մաս
1	Շողակաթ բնակավայրում խելացի ոռոգման համակարգի կառուցում	84 000 000	58 800 000 / 70%	25 200 000 / 30% (որից 11 490 000 ՄԱԿ-ի ներդրում) 13 710 000 համայնք
2	Այգուտ բնակավայրի արտաքին ջրագծի վերակառուցման 2-րդ և 3-րդ փուլի աշխատանքների իրականացում	16 920 000	11 844 000 /70%	5 076 000 /30%
3	Այգուտ բնակավայրի արտաքին ջրագծի վերակառուցման 1-ին փուլի աշխատանքների իրականացում	28 857 129	20 199 990 /70%	8 657 139 /30%

4	Ճամբարակ քաղաքի Բաղրամյան փողոցից մինչև Պ. Սևակ փողոց տանող ճանապարհ-անցուղու հիմնանորոգման, Տ. Մեծի 6 և 8, Պ. Սևակ 12 բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում	72 531 600	39 892 380 /55%	32 639 220 /45%
5	Ճամբարակ քաղաքի Կոմիտաս փողոցից մինչև Վ. Տերյան փողոց ընկած հատվածի, Ճամբարակի համայնքապետարանի հարակից և սպասարկող ճանապարհ-անցուղու ասֆալտապատում	69 960 396	38 478 218 /55%	31 482 178 /45%
6	Թթուջուր բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգում	40 117 733	24 070 650 /60%	16 047 093 /40%
7	Դպրաբակ, Այգուտ, Գետիկ, Մարտունի, Կալավան, Բարեպատ, Ծափաթաղ, Ջիլ, Արտանիշ, Շողակաթ, Դրախտիկ, Աղբերք բնակավայրերի փողոցների, Վերին Ճամբարակ թաղամասի Կոմիտաս փողոցի, Դրախտիկ-Շողակաթ-Ճամբարակ խաչմերուկի, Ճամբարակ քաղաքի Թումանյան փողոցի լուսավորության ցանցերի կառուցում	99 000 000	69 300 000 /70%	29 700 000 .30%
8	Մարտունի բնակավայրի կենտրոնական փողոցի հատվածի սալարկում	18 000 000	12 600 000 /70%	5 400 000 /30%
9	Վահան բնակավայրի արտաքին ջրագծի վերանորոգում	42 192 936	29 535 055 /70%	12 657 881 /30%

10	Այգուտ, Կալավան, Դրախտիկ բնակավայրերի խմելու ջրագծերի կառուցում, Ջիլ բնակավայրի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգում	125 796 000	88 057 200 /70%	37 738 000 /30%
11	Ալրաղացի շենքի կառուցում	70 000 000	ՄԱԿ	
	Ալրաղաց սարք	106 000 EUR-ին համարժեք դրամ	ՄԱԿ	
12	Վահան բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում (դպրոցի ջրագծի վերակառուցում	57 800 000	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ	-
13	Հ-30. Մոտեցում Արծվաշենին հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ5+000 և կմ 5+000-կմ5+720 հատվածների հիմնանորոգման աշխատանքներ (Ճամբարակ-Վահան ճանապարհը)	898 500 000	ՀՀ Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների նախարարություն	-
14	Հ-30. /Մ-4/ - Ճամբարակ - /Մ-14/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 32+000-կմ 35+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ (Թթուջուր-3 կմ)	530 000 000	ՀՀ Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների նախարարություն	
15	44-օրյա պատերազմում Ճամբարակ համայնքի զոհված զինծառայողներին հարգանքի տուրք մատուցելու համար հուշահամալիրի կառուցում	71 383 964	39 261 180 /55%	32 122 784 / 45%
16	«Տոռնադո» պատկերով հուշարձան քանդակի ձեռքբերում	29 000 000	15 950 000 /55%	13 050 000 /45%

17	Ճամբարակ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի կառուցման շինարարական աշխատանքներ	1 000 696 900	Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամ	Նախատեսված է ավարտել 2025 թ.-ի հուլիսի վերջին
18	Ջիլ գյուղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային շենքի կառուցման) աշխատանքներ	830 000 100	Տարածքային Զարգացման Հիմնադրամ	Նախատեսված է ավարտել 2023 թ.-ի դեկտեմբերի վերջին
	Ընդամենը	4 084 756 758	447 988 673	238 280 295

2.4. Պատվիրակված ծառայություններ

Որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն համայնքապետարանն իրականացնում է Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման ծառայությունը՝ ՔԿԱԳ:

2.5. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Հ/Հ	Մուտքերի անվանումը	2023թ. Նախատեսված	2024թ. Կանխատեսվող	2025թ. Կանխատեսվող	2026թ. Կանխատեսվող	2027թ. Կանխատեսվող	2028թ. Կանխատեսվող
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	724316.1	832963.4	957907.7	1101593.5	1266832.6	1456857.4
1.	ՀԱՐԿԵՐ և ՏՈՒՐՔԵՐ	96513.0	110989.9	127638.3	146784.0	168801.6	194121.8
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	35437.7	40753.3	46866.2	53896.1	61980.5	71277.3
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	120.0	138.0	158.7	182.5	209.8	241.3
	Հողի հարկ	5100.0	5865.0	6744.7	7756.4	8919.9	10257.9
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	55961.6	64355.8	74009.1	85110.4	97877.0	112558.5
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	55961.6	64355.8	74009.1	85110.4	97877.0	112558.5
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	4713.7	5420.7	6233.8	7168.8	8244.2	9480.8
	Տեղական տուրքեր	4713.7	5420.7	6233.8	7168.8	8244.2	9480.8
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	400.0	460.0	529.0	608.3	699.6	804.5

2.	**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	491714.0	565471.1	650291.7	747835.4	860010.7	989012.3
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	491714.0	565471.1	650313.2	747860.1	860039.1	989044.8
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	490000.0	563500.0	648025.0	745228.7	857013.0	985564.9
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	624.6	718.3	847.5	974.6	1120.8	1288.9
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ(սուբվենցիաներ)	1089.4	1252.8	1440.7	1656.8	1905.3	2191.0
2.6	Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ						
3.	**ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**	136089.1	156502.4	179977.7	206974.1	238020.3	273723.3
3.1	Տոկոսներ						
3.2	Շահաբաժիններ						
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	72828.0	83752.2	96315.0	110762.2	127376.5	146483.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	69528.0	79957.2	91950.7	105743.3	121604.8	139845.5
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ						
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	3300.0	3795.0	4364.2	5018.8	5771.6	6637.3
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	1999.0	2298.8	2643.6	3040.1	3496.1	4020.5
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	1999.0	2298.8	2313.8	2660.8	3060.0	3519.0
	Վարձատրվող հասարակական աշխատանքներ						
3.5	Վարչական գանձումներ	40262.1	46301.4	53246.6	61233.5	70418.6	80981.4
	Տեղական վճարներ	39362.1	45266.4	52056.3	59864.7	68844.4	79171.1
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի,	900.0	1035.0	1190.2	1368.7	1574.0	1810.1

	շինությունների օրինականացման համար վճարներ						
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	2000.0	2300.0	2645.0	3041.7	3498.0	4022.7
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ						
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից	4535.3	5215.5	5997.8	6897.4	7932.0	9121.9
3.7	Այլ եկամուտներ	19000.0	21850.0	25127.5	28896.6	33231.1	38215.7

Գ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	20814.5	20000.0	24000.0	24000.0	24000.0	26000.0
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	100000.0	125000.0	135000.0	150000.0	165000.0	180000.0
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր						
	Շարժական գույքի իրացումից մուտքեր						
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր						
2.	Պաշարների իրացումից մուտքեր						
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր						
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր						
	Հողի իրացումից մուտքեր	15000.0	20000.0	25000.0	30000.0	35000.0	40000.0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր						

	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (Ա+Բ)	2625.9					
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	2625.9					
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ						
1.1	Արժեթղթեր						
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր						
	-հիմնական գումարի մարում						
1.2	Վարկեր						
	-վարկերի ստացում						

	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում						
1.3	Փոխատվություններ						
	-բյուջետային փոխատվությունների ստացում						
	-ստացված փոխատվությունների գումարի մարում						
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	2625.9					
2.1	Բաժնետոմսեր և կապիտալ այլ մասնակցություն						
2.2	Փոխատվություններ						
	-նախկին տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր						
	-փոխատվությունների տրամադրում						
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը						

2.6. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Հիմնական խնդիրներ	Պատճառ	Հետևանք
Հայստան-Ադրբեջան չլուծվող կոնֆլիկտ,հետպատերազմյան իրավիճակ, սահմանային անկայուն իրավիճակ,	Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածության սրացում, պատերազմ և պատերազմի վտանգ, շարունակական հարձակումներ սահմանների վրա	Հոգեբանական անկումային տրամադրություններ, հուսահատության և անզորության զգացում, հավատի պակաս ապագայի նկատմամբ, աշխատունակության անկում, արտագաղթ, ներդրողների բացակայություն, զարգացման համար առկա ռեսուրսների օգտագործման փոխարեն՝ հրատապ հումանիտար օգնության տրամադրում
Համայնքի բնակչության սոցիալական	սոցիալական ծրագրերի միօրինակություն և	աղքատության աճ, արտագաղթ,

պաշտպանություն	պակաս, ոչ ճիշտ հասցեականություն, գործազրկություն, բազմազավակ ընտանիքների կարիքների ցածր կենսամակարդակ, աշխատատեղերի պակաս	սոցիալական լարվածության աճ, ամուսնալուծությունների թվի աճ, ծնելիության պակաս, զարգացման տեմպերի ոչ բավարար մակարդակ
Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	Հետպատերազմյան անկայուն իրավիճակ, օրենսդրական դաշտ, համախմբվածության պակաս, շուկայի ոչ թափանցիկություն, գործարար հմտությունների և գիտելիքների պակաս, իրազեկման պակաս, ներդրումային ծրագրերի ֆինանսական դժվարություններ, վարկերի բարձր տոկոսադրույքներ	տնտեսությունը զարգացած չէ, արտադրական ձեռնարկությունների սակավություն, գնաճ, աշխատատեղերի փոքր թվաքանակ
Համայնքի գույքի կառավարում	տեղեկատվության պակաս, կառավարչական հմտությունների պակաս	Արդյունավետության բացակայություն
Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	շենքային պայմաններ, աշխատակիցների աշխատավարձի ցածր դրույքաչափեր, բարձր որակավորում ունեցող մասնագետների պակաս, առկա մասնագետների մոտիվացիայի պակաս և անտարբերություն	երեխաների ներգրավվածության պակաս, արտադպրոցական խմբակների թվաքանակի պակաս, գույքի պակաս, հետաքրքրության բացակայություն
Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ	տարածքների, տեխնիկա- սարքավորումների բացակայություն, ծրագրերի պակաս, ֆինանսական ռեսուրսների բացակայություն, մոտիվացիայի պակաս, նախաձեռնողականության պակաս երիտասարդների կողմից որակավորված մարդկային ռեսուրսների պակաս	համաքաղաքային մարզամշակութային միջոցառումների պակաս, անտարբերություն, պասիվություն, ներգրավվածության պակաս
Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում	կազմակերպչական աշխատանքների պակաս, առողջ ապրելակերպի խրախուսման մեխանիզմների բացակայություն, ոլորտի նկատմամբ	ոլորտի կարևորության չգիտակցում, երեխաների և երիտասարդների շրջանում հիվանդությունների աճ, ոչ նպատակային և ձևական միջոցառումների

	դրական վերաբերմունքի պակաս, անուշադրություն, վնասակար սովորությունների աճ՝ ծխախոտ, ալկոհոլ, օնլայն գումարով խաղեր, ծխախոտի, ալկոհոլի օգտագործում դպրոցահասակ երեխաների կողմից, համացանցից կախվախության լայն աճ:	իրականացում, անտարբերության աճ
Համայնքում բնակարանային շինարարության Խթանում	ֆինանսների և համապատասխան տարածքների բացակայություն, ոչ արդյունավետ աշխատանք համապատասխան կառույցների հետ, պահանջատիրության պակաս	ուրբանիզացիայի աճ բնակչության թվի նվազում, նորաստեղծ ընտանիքների թվի անկում, ծնելիության թվի նվազում, վարձակալական բնակարանների պահանջարկի մեծացում
Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում	ներդրումային ծրագրերի, տեխնիկայի, ոլորտային մասնագետների պակաս մտածելակերպ, համապատասխան տարածքների բացակայություն, սրտացավության բացակայություն, անպատասխանատվություն, առկա ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործում, գործող կարգերի չկիրառում, աջակցության պակա	Անբարեկարգ, աղտոտված տարածքներ, խնամված կանաչապատ տարածքների պակաս, աշխատանքների անարդյունավետություն, անտարբերություն
Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում	մասնագիտացված օղակի ոչ լիարժեք աշխատանք, համայնքային կարիքների ոչ ճիշտ գնահատում, տրանսպորտային միջոցների բացակայություն, ֆինանսական միջոցների բացակայություն, ոչ ճիշտ պլանավորում	երթուղիների պակաս, բնակչության դժգոհության աճ, անբարեկարգ ճանապարհներ, երթևեկության դժվարացում, մարդկանց հոսքի պակասում
Համայնքում շրջակա միջավայրի Պահպանություն	Պետական աջակցության պակաս, տեղեկատվության ոչ լիարժեքություն, խնդրի կարևորության չգիտակցում անտարբերություն, համալիր ծրագրերի բացակայություն,	շրջակա միջավայրի նկատմամբ անտարբեր վիճակ, համապատասխան ծրագրերի բացակայություն

	համապատասխան կառույցների միջև համագործակցության բացակայություն	
Զբոսաշրջության զարգացման խթանում	Պետական աջակցության պակաս ենթակառուցվածքների պակաս, մոտիվացիայի պակաս, ոչ նպատակային ծրագրեր, ժամանցի վայրերի բացակայություն, ցուցանակների և տեղեկատվական վահանակների բացակայություն, ոլորտային կառույցների միջև ոչ արդյունավետ համագործակցություն, ոչ ճիշտ պլանավորում, տեղեկատվական աշխատանքների ոչ լիարժեք կազմակերպում, տուրիստական ծառայությունների պակաս, համապատասխան կադրերի բացակայություն, հյուրընկալության ոլորտի մասին հավաստի և ամբողջական տեղեկատվության պակաս	համայնքի գերակա ուղղություն հռչակված զբոսաշրջային ոլորտում հիմնախնդիրների կուտակում, մասնակի, ոչ լիարժեք ծրագրերի իրականացում, զբոսաշրջիկների թվի աճի դանդաղ տեմպեր, ոլորտային ծրագրերի ոչ ամբողջական մշակում, խնդրի կարևորության չգիտակցում, համայնքի տնտեսության աճի դանդաղում
Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	Պետական քաղաքականության կիրառման և աջակցության բացակայություն նախաձեռնությունների պակաս, համապատասխան կառույցների աշխատանքի ոչ արդյունավետություն, համայնքային բյուջեում խնդրի վերաբերյալ ֆինանսական միջոցների առկայության բացակայություն	երիտասարդների հոսք դեպի մայրաքաղաք, մասնակի խնդիրների լուծում, անտարբերություն, հարմարվելու միտում, աշխատատեղերի բացակայություն, նորարական գաղափարների պակաս
Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում	սոցիալական առկա վիճակ, բնակարանային պայմաններ, արտագաղթ, ապագայի նկատմամբ անվստահություն, խրախուսող և	բնակչության թվի նվազում, բնակչության «ծերացում» մանկապարտեզների, դպրոցների թերբեռնվածություն

	նպատակային ծրագրերի բացակայություն	
Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում	Առողջության պահպանման նկատմամբ անլուրջ վերաբերմունք բնակիչների կողմից, համակարգային խնդիրների բաց, բնակչության մտածելակերպ, կանխարգելող ծրագրերի ձևական բնույթ, անվստահություն ոլորտի նկատմամբ, առողջ ապրելակերպ քարոզող ծրագրերի սակավություն, ժամանակակից սարքավորումների անհասանելիություն, ԲՄԿ-ների շենքային պայմանների վատ վիճակ	հիվանդությունների ուշ հայտնաբերում, հետազոտությունների պակաս, հիվանդությունների թվի աճ կյանքի միջին տևողության կրճատում
Բարեգործության խթանում՝ համայնքում մշակութային, կրթական գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով	վստահության պակաս, իրազեկման պակաս, ուղղորդման բացակայություն, համայնքային առաջնահերթությունները ներկայացնելու խնդիր, բարեգործական կառույցների հետ անարդյունավետ աշխատանք	բարեգործական ծրագրերի պակաս, արտաքին կապերի բացակայություն, ոչ նպատակային ներդրումներ
Մարդկային ռեսուրսների կառավարում	կադրային ոչ ճիշտ քաղաքականություն, ոչ արժանապատիվ աշխատավարձեր, աշխատատեղերի սակավություն, վերապատրաստման դասընթացների անարդյունավետություն, ոլորտի գործիքակազմին չտիրապետում, խրախուսման մեխանիզմների ոչ լիարժեքություն կամ չկիրառում	գործունեության անարդյունավետություն, կադրերի ոչ ճիշտ ընտրություն, անբավարար արդյունքներ, մոտիվացիայի պակաս, կադրային արտագաղթ համայնքից, պատասխանատվության պակաս, սրտացավության պակաս

Հոգևոր կյանքի ակտիվացում	Հոգևորականների պակաս, գործող եկեղեցիների պակաս, բնակչության շրջանում քրիստոնեական գիտելիքների խիստ անբավարար վիճակ	Եկեղեցիներ և պատարագների մասնակցության բացակայություն, չմկրտված և եկեղեցական տոների խորհուրդը չգիտակցող քաղաքացիներ, հոգևոր կյանքի կարևորությունը չգիտակցող քաղաքացիներ

2.7. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Ճամբարակ քաղաք

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

• Անտառամերձ գոտու, մաքուր օդի և հրաշալի բնության առկայություն • Ազատ մրցակցություն • Գազաֆիկացված համայնք • Համերաշխ և հյուրասեր բնակչություն • Բնակչության վստահությունը Տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ • Մատչելի աշխատուժի առկայություն • Գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն • Բնական ջրերի առկայություն • Որպես սահմանամերձ քաղաք հարկային արտոնություններ • Բնակլիմայական բարենպաստ պայմաններ • Արտադրական ազատ տարածքների առկայություն	• Սահմանամերձ քաղաք • Արտագնա աշխատանք • Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալապես անապահով ընտանիքների բարձր տոկոս • Բնակչության արտագաղթ • Ենթակառուցվածքների պակաս • Երիտասարդության աշխատանքի և ժամանցային վայրերի բացակայություն • Բարձրորակ մասնագետների բացակայություն • Աշխատավարձի ցածր դրույքաչափեր • Արդյունաբերական ձեռնարկությունների բացակայություն • Արտադրական ձեռնարկությունների փոքր թիվ • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի գրեթե բացակայություն • Վթարային շենքերի առկայություն • Սեյսմիկ վտանգի և սողանքի առկայություն
Հնարավորություններ	Սպառնալիքներ
• Համագործակցության շրջանակների ընդլայնում • Կառավարության աջակցման ծրագրեր (ներառյալ՝ պետական բյուջեից տրվող դոտացիաներ և սուբվենցիաներ) • Մասնավոր սեկտորի և բարերարների կողմից ներդրումային ծրագրերի իրականացում • Տնտեսական կյանքի աշխուժացում • Աշխատուժի առկայություն • Կառավարության տրամադրվածությունը համայնքի զարգացման նկատմամբ • Ներդրողների հոսք • Տուրիզմի զարգացում (էկոտուրիզմի զարգացման հնարավորություններ) • ՓՄՁ-ների հնարավորությունների ընդլայնում • Նոր աշխատատեղերի ստեղծում • Աղբի վերամշակման ծրագիր • Էներգոարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում • Միջազգային համագործակցություն	• Պատերազմի վտանգ • Գործազրկության մակարդակի աճ • Հարկային պարտավորությունների կատարման վատ վիճակ • Բնակֆոնդի վիճակի վատթարացում • Սողանքային երևույթներ • Անկանխատեսելի սահմանային և քաղաքական փոփոխություններ • Աշխատատեղերի անընդհատ կրճատում • Եկամուտների անկայունություն • Բնակչության արտահոսք • Աղբի վերամշակման բացակայություն • Ձմռանը տրանսպորտային խնդիր

Վահան վարչական բնակավայր

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Երիտասարդները շատ են • Զարգացած անասնապահություն • Բերրի հողեր • Սահմանամերձ լինելով օգտվում է շատ ծրագրերից • Սահմանամերձ գոտիների համար բնակարաշինության ծրագիրը • Բարձրագույն կրթություն ունեցողները շատ են	• Սահմանին մոտ լինելը • Բնակչության արտահոսքը • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայությունը • Աշխատատեղերի բացակայությունը • Հիասթափություն • Ջրի խնդիր, որը շուտով կլուծվի • Համայնքի աղտոտվածությունը, հանրային վայրերը կեղտոտ են • Միասնականության պակաս • Նախաձեռնողականության պակաս • Մանկապարտեզի ցանկապատի խնդիր • Ոռոգման համակարգերի բացակայություն
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
• Կաթի և մսամթերի վերամշակում • Բրդի վերամշակում • Վարելահողերի առկայություն • Բարերարներ, որ կարող են աջակցել բնակավայրին որպես սահմանամերձ	• Պատերազմի վտանգը • Բնական երևույթները

Թթուջուր վարչական բնակավայր

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Բնակավայրը գտնվում է հանրապետական նշանակության Հ30 ճանապարհի վրա • Բնակլիմայական պայմանները բարենպաստ են	• Աշխատունակ տարիքի բնակչության պակաս • Ոռոգման համակարգի բացակայություն • Գյուղ.արտադրանքի իրացման հետ կապված դժվարություններ • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայությունը
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
• Գյուղական տուրիզմի զարգացում • Անասնապահության զարգացում • Մեղվաբուծության զարգացում	• Սահմանամերձ գոտում գտնվելը • Սողանքավտանգ գոտու առկայություն

Գեղիկ վարչական բնակավայր

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Աշխատուժի առկայություն • Հողային բավարար ռեսուրսներ • Անմշակ վարելահողերի բացակայություն • Համայնքի ամբողջական գազաֆիկացում • Համայնքի ամբողջական էլեկտրաֆիկացում • Համայնքում հեռախոսակապի առկայություն • Խմելու բարձրորոկ ջրի պաշարների առկայություն • Օգտակար հանածոների առկայություն • Կոյուղագծի առկայություն	• Գյուղտեխնիկայի պակաս • Սպառման շուկայի հեռավորություն • Կենտրոնացված աղբահանության չիրականացում • Զբոսաշրջության, առողջարանական տարածքների բացակայություն • Ծնելիության անկում • Հողերի էրոզացում • Աշխատատեղի ստեղծում • Արտագաղթ • Աշատատեղի բացակայություն • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայությունը
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
• Անասնապահության, դաշտավարության զարգացման հեռանկար • Փոքր և միջին բիզնեսի զարգացում • Գյուղմթերքների և հումքի գների բարձրացում • Աշխատատեղերի ստեղծում պետության աջակցությամբ • Էկո և գյուղական տուրիզմի զարգացման հնարավորություն	• Բնական աղետներ • Անասունների վարակիչ հիվանդությունների տարածում • Գյուղ.մթերքների գների անկում • Վառելիքի,հանքային պարարտանյութերի գների բարձրացում • Ծերացող համայնք • Պատերազմ

Մարտունի վարչական բնակավայր

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

• Հայրենասիրություն • Համախմբվածություն • Նախաձեռնողականություն • Հարգանք մեծերի նկատմամբ • Նորարար ծրագրերի առկայություն	• Ենթակառուցվածքների խնդիր • Կոյուղահեռացման ընդհանուր համակարգի բացակայություն • Խմելու ջրի ջրամբարները մաշված վիճակում են • Բարդ ռելիեֆ • Աշխատետեղերի սակավություն • Գյուղը ծերանում է • Երիտասարդները լքում են համայնքը • Միջհամայնքային և ներհամայնքային տրնասպորտի բացակայություն • Մշակույթի շենքի տանիքի անբարվոք վիճակ • Գյուղի հացատունը փոքր է • Գյուղի ներհամայնքային ճանապարհների անբարվոք վիճակ
Հնարավորություններ	Սպառնալիքներ
• Կաթի և մսամթերի վերամշակում • Բրդի վերամշակում • Տուրիզմի զարգացում • Վարելահողերի առկայություն	• Պատերազմի վտանգը • Բնական երևույթները • Սողանքավտանգ գոտիների առկայություն

Այգուտ վարչական բնակավայր

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Բնական ռեսուրսներ/անտառ, լճեր, գյուղ նշ. հողեր/	• Ոռոգման ցանցի բացակայություն • Ակտիվ սողանքներ • Գործազրկության բարձր մակարդակ • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայությունը
• Հնարավորություններ	Սպառնալիքներ

• Անասնապահություն • Գյուղատնտեսություն • Մեղվաբուծություն • Տուրիզմ	• Ակտիվ սողանքներ • Բնական Աղետներ • Բնակչության արտահոսք • Բնակչության ծերացում

Դպրաբակ վարչական բնակավայր

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Անտառային գոտի • Ասֆալտապատ ճանապարհով կապված մարզի և Երևանի հետ • Ծովի մակարդակից 1200-2500մետր բարձրություն • Հեռագնա արոտներ	• Բնակիչների կողմից սեփական արտադրանքը վաճառելու հմտությունների պակաս • Արտադրական կետերի բացակայություն • Ոռոգման համակարգի բացակայություն • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայություն
• Հնարավորություններ	• Սպառնալիքներ
• Անասնապահության /խոշոր և մանր եղջերավոր/ զարգացում • Մեղվաբուծության զարգացում • Փայտամշակում / հուշանվերների արդադրանք/ • Վայրի հավաքի /դեղաբույսեր / կազմակերպում	• Գետիկ գետի հեղեղում • Երաշտ, սակավ տեղումներ • Սողանքային գոտի

Ձորավանք վարչական բնակավայր

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

